



ACTES DES QUATRIÈMES ASSISES DE LA COOPÉRATION DÉCENTRALISÉE FRANCO-ARMÉNIENNE

29 ET 30 JUIN 2022



ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓՈՒՄ

29 ԵՎ 30 ՀՈՒՆԻՍԻ, 2022 ԹՎԱԿԱՆ

SOMMAIRE

| | |
|---|----------------|
| Journée du 29 Juin | Page 4 |
| 1. Ouverture | Page 5 |
| 2. Réformes territoriales en France et en Arménie | Page 13 |
| 3. Restitution des ateliers | Page 32 |
| 4. Dîner et célébration de trente années de coopération | Page 46 |
| Journée du 30 Juin | Page 47 |
| 5. Séance finale et perspectives | Page 48 |
| 6. Déclaration conjointe | Page 68 |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|--------------|
| 29-ր հունիսի | Էջ 4 |
| 1. Բացում | Էջ 5 |
| 2. Տարածքային բարեփոխումները Փրանսիայում և Հայաստանում | Էջ 13 |
| 3. Քննարկումներ աշխատանքային խմբերում | Էջ 32 |
| 4. Ընթրիք և հանդիսություն՝ նվիրված երեսնամյա համագործակցությանը | Էջ 46 |
| 30-ր հունիսի | Էջ 47 |
| 5. Եզրափակիչ նիստ և հեռանկարներ | Էջ 48 |
| 6. Համատեղ հայտարարություն | Էջ 68 |

**JOURNÉE DU
29 JUIN 2022**

29 ՀՈՒՆԻՍԻՒՒՄ, 2022 Ռ.





1

OUVERTURE ԲԱՅՈՒՄ

M. Bruno Bernard, Président de la Métropole de Lyon.

Ces Assises sont le fruit de 30 ans d'amitié et de coopération franco-arménienne, et de 30 ans de coopération entre Lyon et Erevan. Elles s'inscrivent également dans la solidarité française, après les événements tragiques survenus en Artsakh durant la guerre des 44 jours, en 2020, et dans la solidarité lyonnaise, à travers l'attribution, par la Ville et la Métropole de Lyon, d'une subvention pour aider les hôpitaux de Erevan qui ont accueilli les blessés de ce conflit, tout en continuant d'accompagner les victimes de la pandémie de Covid-19.

Le territoire lyonnais joue un rôle important dans l'histoire de l'amitié franco-arménienne. Nous faisons vivre cette amitié à travers ces Assises franco-arméniennes, qui sont l'occasion d'échanger sur nos expériences et sur les priorités à long terme de nos coopérations.

Lyon coopère avec Erevan depuis 1992 et nous nous apprêtons à renouveler notre convention de coopération. La Métropole de Lyon et ses communes restent aussi auprès de la communauté arménienne pour entretenir la mémoire du génocide du peuple arménien. L'ancien député-maire de Villeurbanne, Jean-Paul Bret, a contribué à l'adoption de la loi de 2001 de reconnaissance du génocide arménien.



Պարոն Բրունո Բերնար, Լիոնի մետրոպոլիայի նախագահ:

Այս համաժողովը ֆրանս-հայկական 30-ամյա բարեկամության և համագործակցության և Լիոնի և Երևանի միջև 30-ամյա համագործակցության արգասիքն է: Այն նաև ֆրանսիական համերաշխության մաս է կազմում՝ 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից հետո և Լիոնի կողմից ցուցաբերված համերաշխության շրջանակներում՝ Լիոն քաղաքի և մետրոպոլիայի կողմից՝ պատերազում վիրավորված անձանց ընդունած Երևանի հիվանդանոցներին օգնելու համար դրամաշնորհ տրամադրելու միջոցով՝ շարունակելով աջակցել Covid-19 համաճարակի զոհերին:

Լիոնի տարածաշրջանն իր կարևոր դերն ունի ֆրանս-հայկական բարեկամության պատմության մեջ: Այս բարեկամությունը մենք կյանքի ենք կոչում ֆրանս-հայկական այս համաժողովի միջոցով, որը հնարավորություն է տալիս փոխանակելու մեր փորձը և մեր համագործակցության երկարաժամկետ առաջնահերթությունները:

Լիոնը համագործակցում է Երևանի հետ 1992 թվականից, և մենք պատրաստվում ենք երկարաձգել համագործակցության պայմանագիրը: Լիոնի մետրոպոլիան և իր համայնքերը հայկական համայնքի կողքին են՝ հայ ժողովրդի ցեղասպանության հիշատակը հարգելու համար: Վիլյորբանի նախկին պատգամավոր-քաղաքապետ Ժան-Պոլ Բրեն նպաստել է Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 2001 թվականի օրենքի ընդունմանը:

Mme Sonia Zdorovtsoff, Présidente du groupe-pays Arménie de Cités Unies France (CUF) et Adjointe au Maire de Lyon, déléguée aux Relations, à la coopération et à la solidarité internationales

La Présidente du groupe-pays remercie l'ensemble des personnes qu'elle a rencontrées au cours de son déplacement en Arménie en mars dernier, et qui se sont par la suite activement mobilisées pour ces Quatrième Assises de la coopération décentralisée franco-arménienne, que la Ville et la Métropole de Lyon sont honorées d'accueillir. Elle salue le travail et les efforts de (feu) Patrick Devedjian, son prédécesseur à la tête du groupe pays Arménie, et rappelle son investissement tout particulier en faveur de l'agriculture durable dans la région du Tavoush.

Elle présente le réseau Cités Unies France, association rassemblant les collectivités territoriales françaises qui agissent à l'international.

Au sein de CUF, le groupe-pays Arménie, créé en 2011, rassemble des collectivités françaises coopérant avec des territoires arméniens. Ce groupe a un véritable rôle à jouer pour redonner de l'élan à la coopération franco-arménienne, ralentie ces dernières années du fait d'un contexte difficile, marqué par la guerre des 44 jours, la pandémie de Covid-19 et leurs conséquences. Ces Assises sont l'occasion de donner une nouvelle impulsion à la coopération décentralisée franco-arménienne, à l'aune de ces changements et nouveaux enjeux.



- **Տիկին Սոնյա Չորովցովա**, Ֆրանսիայի միավորված քաղաքներ ընկերության (CUF) հայաստանյան խմբի նախագահ, Լիոնի քաղաքապետի՝ միջազգային կապերի, համագործակցության և համերաշխության հարցերով տեղակալ :
- Հայաստանյան խմբի նախագահը շնորհակալություն է հայտնում բոլոր այն անձանց, ում հանդիպել է անցյալ տարվա մարտին Հայաստան կատարած իր այցի ընթացքում, և ովքեր այնուհետ ակտիվ ներգրավվել են Ֆրանս-հայկական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովի նախապատրաստական շրջանում, որը Լիոն քաղաքը և Մետրոպոլիան պատիվ ունեն հյուրընկալել: Նա ողջունում է հայաստանյան խումբը գլխավորած իրեն նախորդած Պատրիկ Դեվեջյանի աշխատանքն ու ջանքերը, և հիշեցնում վերջինիս ներդրումը հատկապես Տավուշի մարզում կայուն գյուղատնտեսության զարգացման համար :
- Նա ներկայացնում է Ֆրանսիայի միավորված քաղաքներ ցանցը, որը միջազգային համագործակցություն ունեցող ֆրանսիական տեղական համայնքները համախմբող ընկերություն է :
- Ֆրանսիայի միավորված քաղաքներ ընկերության հայաստանյան խումբը ստեղծվել է 2011 թվականին և միավորում է Հայաստանի տեղական մարմինների հետ համագործակցող ֆրանսիական համայնքները: Այս խումբը մեծ աշխատանք պետք է կատարի ֆրանս-հայկական համագործակցությանը նոր շունչ հաղորդելու համար, որի ակտիվությունը նվազել է վերջին տարիների բարդ իրավիճակների հետևանքով, որոնց թվում հարկ է նշել 44-օրյա պատերազմը, Կովիդ-19-ի համաճարակը և դրանց հետևանքները: Այս համաժողովը համատեղ մտորելու հնարավորություն է՝ որոշելու, թե ինչ ուղղությամբ ենք ցանկանում տանել բոլոր այս փոփոխությունների առնչությամբ գործող մեր համագործակցությունը: Այս համաժողովը լավ առիթ է նոր լիցք հաղորդելու ֆրանս-հայկական ապակենտրոնացված համագործակցությանը՝ հաշվի առնելով փոփոխությունները և նոր մարտահրավերները:

M. Emin Yeritsyan, Président de l’Union des Communes d’Arménie (UCA).

Le Président de l’UCA remercie la France et les collectivités territoriales pour l’aide et le soutien qu’elles ont apporté à l’Arménie au moment de la guerre des 44 jours. La coopération décentralisée apporte une valeur ajoutée à la relation bilatérale franco-arménienne ; elle contribue au rapprochement des deux pays par la personnalisation de cette relation, à travers les territoires. Les Assises qui nous réunissent aujourd’hui sont l’occasion de mettre en lumière des thèmes importants qui ont un impact sur ces coopérations, notamment les dernières réformes territoriales en Arménie et en France, qui pourraient nourrir le développement futur des relations de territoires à territoires. Ces coopérations ne sont pas seulement le témoignage d’une amitié franco-arménienne, elles sont réellement vectrices de développement pour nos territoires. L’occasion nous est donnée d’avoir de plus grandes ambitions et d’ouvrir de nouveaux horizons.

Պարոն Էմին Երիցյան, Հայաստանի համայնքների միության նախագահ (UCA):

Հայաստանի համայնքների միության նախագահը շնորհակալություն է հայտնում Ֆրանսիային և տեղական մարմինների ներկայացուցիչներին՝ 44-օրյա պատերազմի օրերին Հայաստանին ցուցաբերած օգնության և աջակցության համար: Ապակենտրոնացված համագործակցությունը հավելյալ արժեք է բերում ֆրանս-հայկական երկկողմ հարաբերություններին, նպաստում է երկու երկրների մերձեցմանը՝ տեղական մարմինների միջնորդությամբ այս հարաբերությունների անհատականացման միջոցով: Այսօր մեզ միավորող այս համաժողովը առիթ է, որպեսզի լուսաբանենք կարևոր թեմաները, որոնք ազդեցություն ունեն այս համագործակցության վրա, մասնավորապես Հայաստանում և Ֆրանսիայում տեղի ունեցած վերջին տարածքային բարեփոխումները, որոնք կարող են նպաստել տեղական մակարդակով հարաբերությունների հետագա զարգացմանը: Այս համագործակցությունը ոչ միայն ֆրանս-հայկական բարեկամության վկայություն է, այլ նաև տարածքների զարգացման իրական ուղղորդիչ: Մեզ հնարավորություն է տրված ցուցաբերել ավելի մեծ հավակնություններ և բացել նորանոր հորիզոններ:



Mme Hasmik Tolmajyan, Ambassadrice d'Arménie en France.

La coopération décentralisée est un des socles des relations privilégiées qui lient la France et l'Arménie. Le plus ancien jumelage a un demi-siècle. L'établissement des nombreuses coopérations franco-arméniennes montre la détermination de nos collectivités à se rapprocher, et ce, avant même l'indépendance de l'Arménie, et malgré le poids du rideau de fer. Il y a encore de nouvelles coopérations qui émergent, comme celle des villes de Mont-de-Marsan et Gyumri, preuve de la vitalité de la relation bilatérale.

La feuille de route économique franco-arménienne, signée en décembre 2021, et le Forum Ambitions France-Arménie qui s'est tenu en mars 2022 sont aussi des cadres privilégiés de coopération et d'action conjointe, sur lesquels les collectivités peuvent s'appuyer.

Madame l'Ambassadrice remercie les participants pour la mobilisation exceptionnelle de la France et des collectivités françaises auprès de l'Arménie lors de la guerre des 44 jours.

Ֆրանսիայում Հայաստանի դեսպան:

Ապակենտրոնացված համագործակցությունը Ֆրանսիային և Հայաստանին կապող առանձնաշնորհյալ հարաբերությունների հիմնասյուներից մեկն է: Քաղաքների միջև բարեկամության ամենահին օրինակը կեղարյա պատմություն ունի: Ֆրանս-հայկական բազմաթիվ համագործակցությունները վկայում են մեր համայնքների մերձեցման վճռականության մասին, սկսած նույնիսկ Հայաստանի անկախացումից առաջ՝ երկաթյա վարագույրի պայմաններում: Մինչ օրս էլ մենք ունենք նոր հիմնադրվող համագործակցություններ, ինչպես օրինակ՝ Մոն-դե-Մարսան և Գյումրին, ինչը ապացույցն է երկկողմ հարաբերությունների կենսունակության:

2021 թվականի դեկտեմբերին ստորագրված ֆրանս-հայկական տնտեսական համագործակցության ճանապարհային քարտեզը և 2022 թվականի մարտին տեղի ունեցած Հավակնություններ՝ Ֆրանսիա-Հայաստան համաժողովը նույնպես համագործակցության և համատեղ գործողությունների կարևոր շրջանակներ են, որոնց վրա կարող են հենվել տեղական իշխանությունները և համայնքները:

Տիկին դեսպանը շնորհակալություն է հայտնում բոլոր մասնակիցներին՝ 44 օրյա պատերազմի օրերին Հայաստանին օժանդակելու նպատակով Ֆրանսիայի և նրա տեղական իշխանությունների բացառիկ համախմբման համար:



Mme Anne Louyot, Ambassadrice de France en Arménie.

La coopération décentralisée contribue fortement à la structuration de la relation bilatérale entre la France et l’Arménie ; elle permet de développer des liens au plus près des réalités des territoires.

Il appartient à la France d’établir un cadre de coopération, de travailler à la stabilité de la région dans laquelle se trouve l’Arménie et à l’établissement d’une paix durable, notamment avec l’Azerbaïdjan. La France, en tant que coprésidente du groupe de Minsk et présidente du Conseil de l’Union Européenne, pour quelques jours encore, y contribue, tout comme elle contribue au développement économique arménien, qui est une dimension de nos relations bilatérales essentielle pour l’Arménie contemporaine.

Il faut s’adapter aux nouvelles réalités arméniennes (réformes économiques et institutionnelles, processus démocratique en cours, nouveaux élus locaux, partenariat renforcé avec l’Union Européenne). De nombreux appels à projets permettent d’apporter un soutien aux collectivités dans leurs coopérations (Direction de l’Action Extérieure des Collectivités Territoriales, Agence Française de Développement).



Տիկին Անն Լույոտ, Հայաստանում Ֆրանսիայի դեսպան:


Այսպիսի արժեքները համագործակցությունը մեծապես նպաստում է Ֆրանսիայի և Հայաստանի միջև երկկողմ հարաբերությունների կառուցմանը. այն թույլ է տալիս զարգացնել կապեր, որոնք հնարավորինս մոտ են համայնքների իրողություններին:

Ֆրանսիայի նպատակն է համագործակցության շրջանակ ստեղծել, աշխատանքներ տանել տարածաշրջանի կայունության ուղղությամբ, որտեղ գտնվում է Հայաստանը և կայուն խաղաղություն հաստատելու համար, մասնավորապես Ադրբեյջանի հետ: Ֆրանսիան, որպես Մինսկի խմբի համանախագահ և դեռ մի քանի օր ևս Եվրամիության Խորհրդի նախագահ, նպաստում է դրան, ինչպես և նպաստում է Հայաստանի տնտեսական զարգացմանը, որը մեր երկկողմ հարաբերությունների կարևորագույն չափորոշիչն է ժամանակակից Հայաստանի համար:

Մենք պետք է հարմարվենք հայկական նոր իրողություններին (տնտեսական և հաստատությունների բարեփոխումներ, ընթացող ժողովրդավարական գործընթացներ, նոր ընտրված տեղական մարմիններ, ամրապնդված գործընկերություն Եվրամիության հետ): Համագործակցության շրջանակներում կան բազմաթիվ ծրագրերի մրցույթներ, որոնք տեղական համայնքներին օժանդակելու հնարավորություն են ստեղծում (Տարածքային ստորաբաժանումների արտաքին գործունեության վարչություն, Չարգացման ֆրանսիական գործակալություն):

La formation fait partie des priorités centrales à approfondir dans les coopérations décentralisées (formation de gestionnaires de projets notamment) ; la francophonie est aussi une priorité majeure. Le développement de coopérations dans la région du Syunik, centrale pour la stabilité de l'Arménie, pourrait également être un axe de travail prioritaire.

Վերապատրաստումն այն կարևորագույն առաջնահերթություններից է, որը պետք է խորացվի ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում (մասնավորապես՝ ծրագրի ղեկավարների վերապատրաստում), Ֆրանկոֆոնիան ևս շարունակում է մնալ գլխավոր առաջնահերթություններից մեկը: Առաջնահերթ ուղղություններից է համագործակցության զարգացումը Սյունիքի մարզի հետ, որի դերը կարևոր է Հայաստանի կայունության համար:



M. Vatché Terteryan, Vice-ministre de l'Administration territoriale et des Infrastructures d'Arménie.

Chaque édition des Assises renforce nos coopérations et les amène à un niveau plus élevé.

Monsieur le Vice-ministre salue le rôle des associations arméniennes en France, dont la présence est souvent cruciale pour les coopérations franco-arméniennes. La coopération décentralisée est l'un des éléments les plus importants de la relation entre l'Arménie et la France.

Monsieur le Vice-ministre remercie les collectivités territoriales, le Sénat et l'Assemblée nationale pour leur soutien pendant la guerre en Artsakh. Il espère que ces Assises permettront de consolider les liens entre collectivités territoriales et que cela donnera un poids nouveau aux coopérations décentralisées, notamment dans le contexte de la récente signature de la feuille de route économique franco-arménienne. Il faut consolider les évolutions des coopérations.

Պ. Վաչե Տերտերյան, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների փոխնախարար:

Այսպեսնորոնացված համագործակցությանը նվիրված յուրաքանչյուր համաժողով ամրապնդում է մեր համագործակցությունը՝ այն բարձրացնելով նոր մակարդակի:

Փոխնախարարը բարձր է գնահատում Փրանսիայի հայկական միությունների դերը, որոնց առկայությունը հաճախ վճռական է ֆրանս-հայկական համագործակցության մեջ: Այսպեսնորոնացված համագործակցությունը Հայաստանի և Փրանսիայի միջև հարաբերությունների կարևորագույն տարրերից է:

Փոխնախարարը շնորհակալություն է հայտնում տեղական մարմիններին, Մենատին և Ազգային ժողովին՝ արցախյան պատերազմի ժամանակ ցուցաբերված աջակցության համար: Նա հույս է հայտնում, որ Համաժողովը հնարավորություն կտա ամրապնդել տեղական կառավարման մարմինների միջև հարաբերությունները և, որ այն նոր կշիռ կտա ապակենտրոնացված համագործակցությանը, մասնավորապես վերջերս ստորագրված ֆրանս-հայկական տնտեսական համագործակցության ճանապարհային քարտեզի համատեքստում: Պետք է ամրապնդել տարբեր ոլորտներում համագործակցության զարգացումները:



2

**RÉFORMES
TERRITORIALES EN
FRANCE ET EN ARMÉNIE**

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

M. Gilbert-Luc Devinaz, Sénateur du Nouveau Rhône et de la Métropole de Lyon, Président du groupe d'amitié France-Arménie du Sénat, membre de la commission de l'aménagement du territoire et du développement durable du Sénat.

Le groupe d'amitié France-Arménie du Sénat est le groupe d'amitié qui réunit le plus de sénateurs et sénatrices. Il participe à une diplomatie parlementaire entre les deux pays. En octobre 2019, une délégation de députés arméniens avait été accueillie en France ; déjà à l'époque, ils avaient fait part aux sénateurs français de leurs inquiétudes vis-à-vis des exercices militaires de la Turquie et de l'Azerbaïdjan.

M. Devinaz évoque la dernière mission qu'il a conduite en Arménie au mois de mai, qui s'est très bien déroulée. Au cours de leur séjour, les représentants du groupe d'amitié ont notamment eu la chance de rencontrer Mme Diana Gasparyan, Maire de Vagharshapat, plus jeune Maire arménienne d'une grande commune, mais aussi le nouveau Président de la République.

Début 2019, les 12 districts d'Erevan ont été fusionnés, créant de fait la communauté d'Erevan. Plusieurs étapes se sont ensuite succédées pour consolider l'autonomie locale en Arménie. Des questions ont émergé au niveau des territoires : fragmentation territoriale et administrative, faible niveau de performance des collectivités locales, ressources financières et humaines limitées, faible niveau d'accès et de qualité des services publics, opportunités limitées en matière de développement territorial.

La réforme territoriale arménienne soulève de nombreuses questions, qui font en partie écho à des questions qui se sont posées (et qui, pour certaines, continuent de se poser) en France, dans le cadre du processus de décentralisation.

Պարոն Ժիրեր-Լյուկ Դըվինազ, Նոր Ռոնի և Լիոնի մետրոպոլիայի սենատոր, Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ, Սենատի տարածքային պլանավորման և կայուն զարգացման հանձնաժողովի անդամ:

Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խումբն այն բարեկամության խումբն է, որը համախմբում է ամենամեծ թվով սենատորների: Խումբը մասնակցում է երկու երկրների միջև խորհրդարանական դիվանագիտությանը: 2019թ. հոկտեմբերին հայ պատգամավորների պատվիրակությունը հյուրընկալվել է Ֆրանսիայում: Դեռ այդ ժամանակ, նրանք ֆրանսիացի սենատորներին հայտնել են իրենց մտահոգությունը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ձեռնարկված զորավարությունների վերաբերյալ:

Պարոն Դըվինազը խոսել է մայիս ամսին իր գլխավորած պատվիրակության Հայաստան այցի մասին՝ գոհունակություն հայտնելով դրա ընթացքի վերաբերյալ: Այցի ընթացքում բարեկամության խմբի անդամներն առիթ են ունեցել հանդիպելու տիկին Դիանա Գասպարյանի հետ, որը Վաղարշապատի քաղաքապետն է, Հայաստանի խոշոր համայնքներից մեկի ամենաերիտասարդ քաղաքապետը: Հանդիպում է կայացել նաև Հայաստանի նոր Նախագահի հետ:

2019թ. սկզբներին, Երևանի 12 համայնքները միավորվել են, ստեղծվել է մեկ ընդհանուր Երևան համայնքը: Այնուհետև իրար հաջորդող մի քանի փուլերով Հայաստանում ամրապնդվել է տեղական ինքնակառավարման համակարգը: Տարածքային մակարդակում ի հայտ են եկել որոշ խնդիրներ՝ տարածքային և վարչական մասնատվածություն, տեղական իշխանությունների գործունեության թուլյլ մակարդակ, սահմանափակ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, հանրային ծառայությունների մատչելիության և որակի ցածր մակարդակ, տարածքային զարգացման սահմանափակ հնարավորություններ:

Հայաստանի տարածքային բարեփոխումը առաջ բերեց մի շարք հարցեր, որոնք մասամբ արձագանքում են այն հարցերին, որոնք ծագել են (և շարունակում են ծագել) Ֆրանսիայում ապակենտրոնացման գործընթացի շրջանակներում

M. Vatché Terteryan, Vice-Ministre de l'Administration territoriale et des infrastructures d'Arménie.

Processus de décentralisation en Arménie :

- Entre 2009 et 2021, l'Arménie est passée de 915 collectivités à 79 grandes communautés ; le processus d'unification des collectivités a été achevé en 2021. Cette réforme a été proposée pour répondre au manque d'efficacité de certaines politiques publiques menées par les collectivités arméniennes, en raison d'une trop grande fragmentation du territoire.
- Au niveau législatif, la décentralisation des pouvoirs en Arménie a commencé le 16 décembre 2016, avec l'entrée en vigueur de la loi sur l'autonomie locale. Cette loi a conféré aux dirigeants des collectivités des pouvoirs décentralisés, notamment dans les domaines de la protection de la population des situations d'urgence, de l'organisation de la protection civile, de la santé, de la culture, des sports, de la protection sociale, de l'agriculture et du tourisme.

Պարոն Վաչե Տերտերյան, Հայաստանի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների փոխնախարար:

Ապակենտրոնացման գործընթացը Հայաստանում.

- 2009-2021թթ. ընթացքում Հայաստանը 915 համայնքից անցում է կատարել 79 խոշորացված համայնքի: Համայնքների միավորման գործընթացն ավարտվել է 2021 թվականին: Այս բարեփոխումն առաջարկվել էր հայկական տեղական իշխանությունների կողմից իրականացվող պետական քաղաքականության որոշ հատվածների արդյունավետության բացը լրացնելու նպատակով, ինչը տարածքի չափից ավելի մասնատվածության հետևանք էր:
- Օրենսդրական մակադակով, Հայաստանում կառավարման մարմինների ապակենտրոնացումը սկսվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի գործողության մեջ մտնելով: Այս օրենքը համայնքների ղեկավարներին տվեց ապակենտրոնացված լիազորություններ, մասնավորապես արտակարգ իրավիճակների պայմաններում՝ բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման, առողջապահության, մշակույթի, սպորտի, սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտներում:



Objectifs des réformes :

- Permettre aux collectivités de capter davantage de financements et d'améliorer la pertinence des investissements réalisés ;
- Améliorer l'offre et la qualité des services publics ;
- Renforcer les capacités des collectivités pour résoudre les problèmes locaux ;
- Favoriser le développement économique local et améliorer la vie des habitants.

Présentation de quelques solutions innovantes mises en place dans les collectivités :

- Mise en place d'un système électronique unifié pour la collecte des impôts locaux ;
- Création de bureaux de service aux citoyens ;
- Développement d'un système d'apprentissage à distance du Ministère de l'administration territoriale et des infrastructures ;
- Renforcement de la participation publique à l'autonomie locale : vote par SMS, diffusion en ligne des réunions du Conseil communautaire, sites internet, e-services...

Բարեփոխումների նպատակը.

- Տեղական իշխանություններին հնարավորություն տալ ներգրավելու ավելի շատ ֆինանսաական միջոցներ և բարելավելու կատարված ներդրումների արդյունավետությունը,
- բարելավել հանրային ծառայությունների մատուցումն ու որակը,
- Հզորացնել համայնքների կարողությունները՝ տեղական խնդիրները լուծելու նպատակով,
- նպաստել տեղական մակարդակում տնտեսության զարգացմանը և բարելավել բնակիչների կյանքը:

Համայնքներում ներդրված մի քանի նորարարական լուծումների ներկայացում.

- տեղական հարկերի հավաքագրման միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծում,
- քաղաքացիների համար սպասարկման գրասենյակների ստեղծում,
- տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հեռավար ուսուցման համակարգի ստեղծում,
- տեղական ինքնակառավարմանը հասարակության մասնակցության ուժեղացում. SMS քվեարկություն, համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակում, ինտերնետային կայքեր, էլեկտրոնային ծառայություններ և այլն:

M. Gilbert-Luc Devinaz :

La France, comme l'Arménie, a connu d'importantes réformes territoriales depuis les premières grandes lois de décentralisation en 1982.

L'autonomie locale a beaucoup évolué depuis et fait encore l'objet de débats intenses chez les élus locaux.

Peut-on identifier des similitudes entre les enjeux de réforme en France et en Arménie ?


Պարոն Ժիլբեր-Լյուկ Դրվինազ.

Ֆրանսիայում, ինչպես և Հայաստանում տեղի են ունեցել խոշոր տարածքային բարեփոխումներ 1982թ. ապակենտրոնացման մասին առաջին կարևորագույն օրենքներից հետո:

Այդ ժամանակից տեղական ինքնակառավարումը մեծ զարգացում է սպրեղ և դեռևս բուն քննարկումների առարկա է ընտրված տեղական ներկայացուցիչների միջև:

Կարո՞ղ ենք արդյոք նմանություններ գտնել Ֆրանսիայի և Հայաստանի բարեփոխումների մարտահրավերների առումով

Administrative-Territorial Structure



M. François Charlottin, Chef du bureau des structures territoriales eu sein de la sous-direction des compétences et institutions locales (Direction générale des collectivités locales, Ministère chargé des collectivités territoriales).

Même si les contextes sont différents, on peut observer des ressemblances entre la France et l'Arménie en matière de réforme territoriale. En France, les réformes se font selon deux axes : une axe de décentralisation, c'est-à-dire l'octroi aux collectivités territoriales de nouvelles compétences, et un axe plus récent (essentiellement depuis 2010) de rationalisation du paysage local. La réforme lancée ces dernières années par le gouvernement arménien semble s'inscrire elle aussi dans un mouvement de rationalisation.

En France, parmi les dernières lois qui ont apporté des changements significatifs, on peut citer la loi du 16 décembre 2010, qui visait la simplification de l'intercommunalité, avec l'objectif d'adhésion de l'ensemble des communes à une intercommunalité en 2014, la suppression de la clause générale de compétence des départements et des régions, et une incitation à la relance des fusions de communes.

Պարոն Ֆրանսուա Շարլոտեն, տեղական իրավասությունների և հաստատությունների ենթատնօրինության տարածքային կառույցների գրասենյակի ղեկավար (Տեղական կառավարման մարմինների գլխավոր տնօրինություն, Տարածքային կառավարման հարցերով նախարարություն):

Զնայած համատեքստերը տարբեր են, Ֆրանսիայի և Հայաստանի տարածքային բարեփոխումներում կարելի է դիտարկվել նմանություններ: Ֆրանսիայում բարեփոխումներն իրականացվում են երկու առանցքների շուրջ՝ ապակենտրոնացում, այսինքն՝ տեղական իշխանություններին նոր լիազորությունների տրամադրում և երկրորդը, որն ավելի նոր է (հիմնականում 2010թ. սկսած)՝ տեղական լանդշաֆտի արդյունավետ օգտագործում: Հայաստանի կառավարության կողմից վերջին տարիներին ձեռնարկված բարեփոխումը կարծես թե նույնպես արդյունավետության բարձրացման է միտված:

Ֆրանսիայում նշանակալի փոփոխություններ բերած օրենքների թվում պետք է նշել 2010թ. դեկտեմբերի 16-ի օրենքը, որի նպատակը միջհամայնքային համագործակցության պարզեցումն էր՝ նպատակ ունենալով 2014թ. բոլոր համայնքները միավորել՝ միջհամայնքային համագործակցության մարմնին անդամակցելու միջոցով, վերացնելով դեպարտամենտների և շրջանների իրավասության մասին ընդհանուր դրույթը և խրախուսելով համայնքային միաձուլումների վերսկսումը:

En 2014, la loi de Modernisation de l'action publique et d'affirmation des métropoles (MAPTAM) a poursuivi une logique de rationalisation et d'amélioration des capacités locales, notamment à travers la création des métropoles (nouvelles catégories d'intercommunalités) pour dynamiser les neuf agglomérations les plus importantes en dehors de Paris, Lyon et Marseille.

- 2014թ. «Հանրային գործունեության արդիականացման և մետրոպոլիաների հաստատման մասին» օրենքը ուներ տեղական կարողությունների արդյունավետության բարձրացման և բարելավման տրամաբանություն, մասնավորապես՝ մետրոպոլիաների (միջհամայնքային միավորման նոր տեսակ) ստեղծման միջոցով խթանելու համար Փարիզից, Լիոնից և Մարսելից բացի ինը ամենամեծ ագլոմերացիաները:

Why Administrative-Territorial Reforms in Armenia?

- **Territorial and administrative fragmentation**
- **Low level of performance of local authorities**
- **Limited resources (human, financial, etc.)**
- **Low level of access and quality of services at the local level**
- **Limited opportunities for territorial development**
- **Limited opportunities for decentralization**



En 2015, la France passe de 22 à 13 régions. La loi portant Nouvelle organisation territoriale de la république (NOTRE) prolonge cette logique de rationalisation, avec la confirmation de la suppression de la clause générale de compétence des départements et des régions, un plan de regroupement des intercommunalités, et l'organisation de « blocs de compétences cohérents ».

La loi Engagement et proximité de 2019 tend à revaloriser la place des communes, grâce à plusieurs mesures : un pacte de gouvernance entre les communes et leur intercommunalité, une meilleure représentation des maires de petites communes au sein des instances intercommunales, ou encore la possibilité d'ajuster les périmètres qui n'auraient pas fonctionné en ouvrant à des scissions d'intercommunalités.

Ce mouvement se poursuit par la loi relative à la différenciation, à la décentralisation, à la déconcentration et à la simplification (loi 3DS), permettant des assouplissements selon deux axes : l'ouverture plus significative à la différenciation territoriale des normes (dans le respect du principe d'égalité, possibilité d'adopter des règles spécifiques selon les réalités locales) et un assouplissement dans le partage des rôles entre les communes et les intercommunalités dans plusieurs domaines (voirie, cimetière, eau et assainissement, tourisme).

2015 թվականին Ֆրանսիան իր 22 շրջանը վերակազմավորեց 13 շրջանի: Հանրապետության նոր տարածքային կազմակերպման մասին օրենքը շարունակում է արդյունավետության բարձրացման այս տրամաբանությունը՝ հաստատելով դեպարտամենտների և շրջանների իրավասության մասին ընդհանուր դրույթի վերացումը, միջհամայնքային վերախմբավորման ծրագիրը և «իրավասությունների համանման բաժինների» կազմակերպումը :

2019թ. «Պարտավորության և հարևանության» օրենքի նպատակն էր վերաարժևորել համայնքների տեղը հետևյալ միջոցներով՝ կառավարման համաձայնագիր համայնքների և նրանց միջհամայնքային համագործակցության մարմնի միջև, փոքր համայնքների ղեկավարների լավագույն ներկայացվածություն միջհամայնքային համագործակցության մարմնում և նաև շրջանակների ճշգրտման հնարավորություն, որոնք չեն աշխատել միջհամայնքային տարածայնությունների հետևանքով:

Այս շարժումը շարունակվում է տարբերակման, ապակենտրոնացման, կենտրոնացվածության վերացման և պարզեցման մասին օրենքով (3DS օրենք), որը ճկունության հնարավորություն է տալիս երկու գլխավոր ուղղություններով. Նշանակալիորեն բաց լինել չափորոշիչների տարածքային տարբերակման հանդեպ (հարգելով հավասարության սկզբունքը, տեղական իրողություններին համապատասխան առանձնահատուկ կանոնակարգեր ընդունելու հնարավորությամբ), և մեղմացումներ համայնքներ և միջհամայնքային համագործակցության մարմնի միջև գործառույթների բաշխման գործընթացում մի քանի ոլորտներում (ճանապարհներ, գերեզմանատներ, ջրամատակարարում և կոյուղի, զրոսաշրջություն):

De manière générale, les réformes territoriales doivent nécessairement être pensées dans la durée, dans un dialogue avec les élus locaux, avec des possibilités d'assouplissements et d'ajustements des dispositifs. Cette remarque peut s'appliquer à la situation française comme à la situation arménienne.

Ընդհանուր առմամբ, տարածքային բարեփոխումները պետք է անայսման դիտարկվեն երկարաժամկետ հեռանկարում, տեղական մարմիններում ընտրված անձանց հետ երկխոսության միջոցով, ճկունության և շտկումների հնարավորություններով: Այս դիտարկումը կիրառելի է ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ Հայաստանի պարագայում :

The enlarged communities of Armenia



M. Gilbert Luc Devinaz :

Quelles sont les bénéfices, du point de vue des collectivités territoriales arméniennes, de la mise en place de ces réformes : une meilleure efficacité de la dépense publique, la mise en place de services publics de plus grande qualité ?

Պարոն ժիլբեր Լյուկ Դրվինազ.

Որո՞նք են այս բարեփոխումների իրականացման առավելությունները հայկական տեղական իշխանությունների տեսանկյունից. պետական ծախսերի լավագույն արդյունավետություն, ավելի որակյալ հանրային ծառայությունների ստեղծում:

Y a-t-il, au contraire, des points de vigilance ?

Եվ ընդհակառակը, որո՞նք են զգոնություն պահանջող կետերը:



M. Emin Yeritsyan , Président de l’Union des Communes d’Arménie.

Il y a des convergences entre les réformes territoriales en France et en Arménie. L’Arménie connaît déjà un certain degré de décentralisation et le gouvernement central prévoit d’octroyer de nouvelles compétences aux collectivités locales. La petite taille de la majorité des collectivités arméniennes était un frein à ce processus de transfert de compétences. La définition de nouveaux ensembles territoriaux arméniens était une étape essentielle pour la suite des réformes de décentralisation en Arménie. Les collectivités françaises ont un rôle à jouer pour aider leurs partenaires. La réduction du nombre de collectivités arméniennes permettra un meilleur équilibre dans les rapports entre collectivités arméniennes et françaises.

Grâce à la réforme en Arménie, le nombre de personnel administratif dans les collectivités va augmenter, ce qui favorisera un meilleur exercice des nouvelles compétences octroyées. Cela facilitera aussi les formations et l’ancrage du changement du système électoral. La culture pluripartiste, qui existe en France au niveau local, est encore peu présente au sein des collectivités arméniennes, même si plusieurs partis sont représentés dans les conseils municipaux.

Պարոն Էմին Երիցյան, Հայաստանի համայնքների միության նախագահ

Փրանսիայի և Հայաստանի տարածքային բարեփոխումներում կան նմանություններ: Հայաստանն արդեն ունի որոշակի աստիճանի ապակենտրոնացում և կենտրոնական կառավարությունը ծրագրում է նոր լիազորություններ տրամադրել տեղական իշխանություններին: Հայկական համայնքների մեծամասնության փոքր լինելը խոչընդոտ էր հանդիսանում իրավասությունների փոխանցման այս գործընթացում: Հայաստանի նոր տարածքային միավորումների սահմանում կարևորագույն քայլ էր Հայաստանում ապակենտրոնացման բարեփոխումների հետագա ընթացքի համար: Փրանսիական տեղական իշխանությունները մեծ դեր կարող են ունենալ իրենց գործընկերներին օգնելու հարցում: Հայկական համայնքների թվի կրճատումը թույլ կտա հավասարակշռություն հաստատել հայ և ֆրանսիական համայնքների միջև հարաբերություններում:

Հայաստանում տեղի ունեցած բարեփոխումների շնորհիվ, համայնքերում կավելանա վարչական աշխատողների թիվը, ինչը կնպաստի տրված նոր իրավասությունների լավագույնս կատարմանը: Սա կհեշտացնի նաև վերապատրաստումները, ինչպես նաև ընտրական համակարգում փոփոխությունների ամրագրումը: Տեղական մակարդակում Փրանսիայում առկա բազմակուսակ-ցականության մշակույթը դեռևս քիչ է ներկա հայկական տեղական իշխանություններում, չնայած որ բազմաթիվ կուսակցություններ են ներկայցված քաղաքային խորհուրդներում:

Cette réforme dotera les collectivités de davantage de moyens humains et financiers, y compris pour faire vivre les coopérations décentralisées. Pour cela, il faudra développer dans les collectivités la création de services de relations internationales, avec des personnes (idéalement francophones) qui assureront un suivi des coopérations.

Այս բարեփոխումը համայնքները կապահովի ավելի շատ մարդկային և ֆինանսական միջոցներով հնարավորություն ստեղծելով նաև ապակենտրոնացված համագործակցության համար: Դրա համար, տեղական մարմիններում անհրաժեշտ է ստեղծել միջազգային կապերի ծառայություններ, ներգրավելով անձանց (ցանկալի է՝ ֆրանսախոս), ովքեր կգրադվեն համագործակցության հարցերով:

Il faudrait augmenter la qualité et la quantité des coopérations décentralisées avec la France, et, au niveau local, développer des dynamiques de réseau, afin d'intégrer davantage d'acteurs locaux arméniens dans les coopérations.

Անհրաժեշտ է ավելացնել Ֆրանսիայի հետ ապակենտրոնացված համագործակցության որակը և քանակը, իսկ տեղական մակարդակում զարգացնել ցանցի դինամիկան՝ համագործակցության մեջ ավելի շատ տեղական հայ ներկայացուցիչների ներգրավելու համար:

M. Gilbert Luc Devinaz :

La France va fêter les quarante ans du début de sa décentralisation.

Պարոն Ժիլբեր Լյուկ Դըվինազ.

Ֆրանսիան շուտով տոներու է իր ապակենտրոնացման հիմնադրման քառասունամյակը:

Aujourd'hui, peut-on dire que l'organisation territoriale française offre une réponse satisfaisante face à la complexité des défis rencontrés au niveau local ?

Կարո՞ղ ենք այսօր ասել, որ Ֆրանսիայի տարածքային կառուցվածքը գոհացուցիչ կերպով համապատասխանում է տեղական մակարդակում հանդիպող մարտահրավերների բարդությանը:

M. Michel Soulas, Directeur Général Adjoint à la Métropole de Lyon.

Les grands principe du service public « à la française » sont :

- le principe de mutabilité, c'est-à-dire l'adaptation du service public aux besoins des usagers, qui est un enjeu majeur de nos jours ;
- la continuité du service public ;
- l'égalité des usagers devant le service public.

